



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

11.05.2022թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Էդվարդ Հովհաննիսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanjan@hetq.am**

Հարգելի պարոն *Հովհաննիսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հողված է պատրաստում: Արմավիրի մարզի Ապագա գյուղի (Արաքս խոշորացված համայնք) ոռոգման ցանցում 2021թ. իրականացվել են ներդրումներ և անցկացվել է ԼՌ-40 և ԼՌ-60 կիսախողովակներ: 2022թ. մարզխորհրդի առաջին նիստի ժամանակ ՋՕԸ ներկայացուցիչները բարձրաձայնեցին, որ կիսախողովակների մի մասի թողունակությունը (ԼՌ-40) քիչ է և խնդիրներ են առաջանում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել պարզաբանում և տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Երբ է իրականացվել նորդրումային ծրագիրը, ի՞նչ միջոցներով է իրականացվել, որքա՞ն է կազմել աշխատանքների իրականացման պայմանագրային գումարը, ո՞ր ընկերությունն է իրականացրել աշխատանքները և քանի՞ գծամետր երկարության կիսախողովակ է անցկացվել:
2. Նշված կիսախողովակներից քանի՞ գծամետրն է ԼՌ-40, քանիսը՝ ԼՌ-60: Ո՞վ է հանդիսացել աշխատանքների կատարման պատվիրատուն:
3. Նախագծի կազմման և շինաշխատանքների իրականացման նպատակով արդյոք ստեղծվել է հանձնաժողով: Եթե այո, ապա ո՞ր մարմիններից կամ կառույցներից են եղել հանձնաժողովի անդամները:
4. Եթե պատվիրատուն հանդիսացել է համայնքը կամ պետությունը, ապա աշխատանքների ընդունման ժամանակ արդյո՞ք բարձրաձայնվել է, որ կիսախողովակների թողունակության նվազեցումը կարող է առաջացնել խնդիրներ:
5. Մարզպետարանն ի՞նչ քայլեր է ձեռնարկում խնդիրը կարգավորելու ուղղությամբ, քանի որ թողունակության պատճառով ոռոգման ջրի մի մասը հողօգտագործողին է հասնում հողային առուների միջոցով՝ առաջացնելով ջրի մեծ կորուստներ:

Կանխավ շնորհակալություն *Դինոյ՝* Գ. Բալասանյան